ՃԱՆԱՉՎԱԾ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կյանքից հեռացավ ճանաչված, ականավոր գիտնական, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Մանուկ Արսենի Հարությունյանը: Նա ծնվել է 1946 թ. դեկտեմբերի 14-ին՝ Երևանում, ծառայողի ընտանիքում: Սովորել և ավարտել է Երևանի թիվ 2 գիշերօթիկ դպրոցը:

1964 թ. ընդունվել և 1969 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության բաժինը՝ պատմության ուսուցչի մասնագիտությամբ: 1969 թ., երբ ստեղծվեց ՀՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, նա աշխատանքի անցավ ավագ լաբորանտի պաշտոնում: Նույն թվականին զորակոչվեց խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո՝ 1970 թ., աշխատանքի վերադարձավ նույն ինստիտուտ, որտեղ էլ աշխատել է մինչև կյանքի վերջը: Նրա գիտական հետաքրքրությունները մշտապես կապված էին հայ հասարակության խորհրդային և հետագա շրջանի ապրելակերպի հիմնախնդիրների հետ: Ինստիտուտում աշխատելու տարիներին Մ. Հարությունյանը հրապարակել է այդ խնդիրներին նվիրված բազմաթիվ գիտական հոդվածներ ու մենագրություններ, ինչպես «Սոցիալիզմը և մարդու իրավունքները» (աշխատություն, 1980 թ.), «Ապրելակերպ: Անձնավորություն. գիտատեխնիկական հեղափոխություն» (1984 թ.), «Հայաստան. օտարացած հասարակություն» (համահեղինակությամբ, 2007 թ.), «Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը» (2014 թ.), «Իշխանության լեգիտիմություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ» (2016 թ.), «Արևմտաեվրոպական և հետ-

խորհրդային պառլամենտարիզմը համեմատական հեռանկարում» (համահեղինակությամբ, 2020 թ.):

1981 թ. Մ. Հարությունյանը պաշտպանել է թեկնածուական, իսկ 2015 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ սոցիալական փիլիսոփայության գծով: Հետագայում փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանուկ Հարությունյանը ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում ղեկավարում էր Սոցիալական փիլիսոփայության բաժինը և ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի փիլիսոփայության ամբիոնը: Նա այդ կենտրոնի լավագույն դասախոսներից էր: Ճարտար լեզու ուներ, սրամիտ էր, ուսանողներն ու ասպիրանտները (ընդ որում տարբեր մասնագիտությունների տեր) մեծ հետաքրքրությամբ էին մասնակցում նրա դասախոսություններին, լսում հյութեղ հայերենով մատուցվող համաշխարհային փիլիսոփայության տեսությունները: Մ. Հարությունյանին լավ ճանաչում ու նրա հետ սերտորեն համագործակցում էին հանրապետության տարբեր բուհերի փիլիսոփայության ամբիոնները. նա հարգված և սիրված էր ինչպես գիտական աշխարհում, այնպես էլ ուսանողների շրջանում: Միշտ հանգիստ, բարյացակամ և ուշադիր գիտնականը մշտապես ինստիտուտի պարզ, մարդկային և ոչ պաշտոնական շփումների կենտրոնում էր:

Բոլոր աշխատակիցները սիրով են հիշում Մանուկի աշխատասենյակում ծայր առնող բազմաթիվ ու երկարատև քննարկումները, մտքերի փոխանակումը, հետաքրքիր զրույցներն ու վեճերը: Թե՛ երիտասարդ, թե՛ տարեց գիտնականների համար հետաքրքիր էր մասնակցել այդ յուրատեսակ «կլոր սեղաններին»: Լինելով ինստիտուտի ավագ գիտաշխատող՝ նա համատեղության կարգով մի քանի տարի աշխատել է որպես գիշերային պահակ և իրեն բնորոշ սրամտությամբ ինքն իրեն անվանում էր «պահակ գիտաշխատող»: Նա իսկապես կյանքի փիլիսոփա էր և իր կյանքում էլ փիլիսոփայությունն ընկալում էր որպես կյանքի ուղի: Սիրում էր կյանքը՝ իր բոլոր դրսևորումներով, հեդոնիստ, առատաձեռն ու հյուրասեր, ընկերությունը գնահատող մարդ էր, հետաքրքիր մտածողություն ունեցող անհատ էր, ազատամիտ, ճշմարտախոս և բարյացակամ անձնավորություն: Նրա գիտական շատ ծրագրեր անավարտ մնացին: Խորհրդանշական է, որ մահը անսպասելի վրա հասավ նոյեմբերի 18-ին, երբ գիտական աշխարհը նշում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանած՝ փիլիսոփայության միջազգային օրը:

Մանուկ Հարությունյանի պայծառ հիշատակը ընդմիշտ կմնա մեր սրտերում:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի աշխատակիցներ